

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«ԱԶԱՏ ԺԱՄԱՆԱԿ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ռ. ՎԱՆԵՍՅԱՆ

Սովետական ժողովրդի առջև ծառայած զլիսավոր խնդիրներից մեկն էլ կոմունիստական գիտակցությամբ օժտված, բազմակողմանիորեն զարգացած մարդու դաստիարակումն է: Լուծելով այդ խնդիրը, որն իր մեջ ներդաշնակում է հոգևոր հարստություն, բարոյական մաքրություն և ֆիզիկական կատարելություն, կուսակցությունը վիթխարի նշանակություն է տալիս աշխատավորների կողմից ազատ ժամանակի խելացի օգտագործմանը:

4. Մարքսը ժամանակին նշել է, որ ազատ ժամանակը հանրային հարբստության շափանիչն է: Այն կարող է իսկապես հանրային հարստություն լինել, եթե օգտագործվում է մարդու ընդունակությունների համակողմանի զարգացման համար, ամբողջ հասարակության նյութական ու հոգևոր պոտենցիալը բազմապատկելու համար: Ազատ ժամանակի պրոբլեմը, որպես հասարակության և անհատի հարստության շափանիչ, զարգացած սոցիալիզմի պայմաններում ստանում է առավել տեսական ու գործնական նշանակություն: Այլ կերպ ասած, զարգացած սոցիալիզմի ժամանակ ավելի ու ավելի է բարձրանում ազատ ժամանակի արժեքը ինչպես առանձին անհատների, այնպես էլ հասարակության համար ամբողջությամբ վերցրած: Ուստի միանգամայն հասկանալի և տրամաբանական է, որ ՍՄԿԿ-ն իր տեսական ու պրակտիկ գործունեության ընթացքում միշտ էլ առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ինչպես աշխատավորների ազատ ժամանակի ավելացման, այնպես էլ այդ ժամանակի առավել խելացի ու նպատակասլաց օգտագործման հարցերին: Այսպես, օրինակ, ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերում նշված է. «Առավել ուսցիտնալ օգտագործել աշխատաժամանակը, վերացնել նրա անարտադրողական ծախսումներն ու կորուստները, ավելացնել աշխատավորների ազատ ժամանակը՝ հասարակական սպասարկումը զարգացնելու, տնային տնտեսության մեջ կատարվող աշխատանքը հեշտացնելու հիման վրա, կատարելագործել ժամանցի, հատկապես երիտասարդության ժամանցի ձևերն ու կազմակերպումը»¹:

Մեր նպատակը չէ անդրադառնալ ազատ ժամանակի ավելացման հիմնական աղբյուրներին ու ուղիներին կամ էլ մատնանշել նրա ուսցիտնալ օգտագործման ձևերն ու միջոցները: Մեր խնդիրն է, հնարավորության սահմաններում, ցույց տալ, թե ինչ հիմնական տարրեր են մտնում «ազատ ժամանակ» հասկացության կառուցվածքի մեջ, և ինչպիսի սոցիալական ֆունկցիաներ են

¹ ՍՄԿԿ 26-րդ համագումարի նյութերը, Ծր., 1981, էջ 220:

դրանք կատարում: Կարծում ենք, ճիշտ վարված կլինենք, եթե հարցի պարզաբանումն սկսենք աշխատանքային օրվա սահմանների քննարկումից, որին հանգամանորեն անդրադարձել է Կ. Մարքսը: Նա նշում է, թե ամբողջ ժամանակը, որն իր տրամադրության տակ ունի անհատը, իր կառուցվածքով նույնանման չէ: Հայտնի է, որ հասարակությունը չի կարող գոյություն ունենալ, եթե շարտադրի սնունդ, հագուստ և այլ բարիքներ: Մարդու աշխատանքային գործունեությունը, որի նպատակը այդ արժեքների ստեղծումն է, մարդու և հասարակության գոյության առաջնահերթ պայմանն է: Ուստի ժամանակի ընդհանուր բյուջեից նախ և առաջ առանձնացվում է աշխատաժամանակը: Հայտնի է նաև, որ աշխատաժամանակը ամբողջ օրը տեւել չի կարող, որովհետև մարդուն անհրաժեշտ է ժամանակ քնելու, սնվելու, այդ թվում նաև կենսաբանական և ֆիզիոլոգիական բնական պահանջումների բավարարման համար: Բացի դրանից, աշխատանքի պրոցեսն իր հերթին պահանջում է տնից աշխատանքի վայր և տուն, աշխատանքային հերթափոխի ընդունում և հանձնում, բանվորական տեղի պատրաստում և այլ գործողությունների համար անհրաժեշտ ժամանակ: Ինչպես տեսնում ենք, ժամանակի ընդհանուր բյուջեից առանձնացվում է երկրորդ մասը, որն, ինչպես առաջին մասը, օբյեկտիվորեն անհրաժեշտ է:

Այս բոլորի հետ միասին Կ. Մարքսը առանձնացնում է նաև որոշակի ժամանակ, որը «մարդուն անհրաժեշտ է կրթության, մտավոր զարգացման, սոցիալական ֆունկցիաներ կատարելու, ընկերական հաղորդակցության, ֆիզիկական ու մտավոր ուժերի ազատ խաղի համար»²:

Աշխատանքային օրվա սահմանների մարքսյան քննարկումից որոշակի երևում է, որ պետք է տարբերել «աշխատաժամանակ», «արտաաշխատաժամանակ» և «ազատ ժամանակ» հասկացությունները: Մինչդեռ առանձին հեղինակներ³ արտահայտում են այն կարծիքը, համաձայն որի արտաաշխատանքային ժամանակը դա հենց ազատ ժամանակն է: Նույնացնելով այդ երկու հասկացությունները, փաստորեն ոչ արտադրական գործունեության բոլոր ձևերը վերագրում են ազատ ժամանակին: Որոշակի տարբերություն չի դրվում, ասենք, տնային տնտեսության վրա ծախսվող և տնից աշխատանքի վայր և աշխատանքի վայրից-տուն ճանապարհի վրա ծախսվող հասարակական գործունեության և քնի, սպորտով զբաղվելու և սնունդ ընդունելու ժամանակի միջև և այլն:

Օրինակ, Ա. Իոպրըշը «Կոմունիզմ և աշխատանք» գրքում գրում է. «Ազատ ժամանակը կազմվում է այն ժամերից, որ աշխատավորները անց են կացնում արտադրությունից դուրս, աշխատանքային գործունեության ավարտումից մինչև հաջորդ աշխատանքային օրվա սկսվելը»⁴: Նույն տեսակետն է պաշտպանում Բ. Դ. Բասովը: «Եթե այս պրոբլեմի ուսումնասիրությանը մոտենանք դիալեկտիկորեն,— գրում է նա,— ինչպես ցանկացած գիտական պրոբլեմին, ապա անհրաժեշտ է գալ այն հետևության, որ «ազատ ժամանակ» և «արտաաշխատանքային ժամանակ» հասկացությունները նույնն են»⁵:

² Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Եր., 1954, էջ 278:

³ Տե՛ս Ա. В. Мяскин, Свободное и всестороннее развитие личности, М., 1966, էջ 4, А. Глазачов, В. С. Молдован, Труд и всестороннее развитие личности, М., 1968, էջ 14, «БСЭ», т. 23, М., 1976, էջ 87:

⁴ А. Иопрыш, Труд и коммунизм, М., 1961, с. 92.

⁵ Б. Д. Басов, Свободное время и воспитание нового человека (автореферат), М.: 1968, с. 7.

Այս կարծիքը հիմնավորելու համար հեղինակը վկայակոչում է Կ. Մարքսի այն միտքը, թե աշխատաժամանակից վեր մեծ քանակությամբ ազատ ժամանակի ստեղծումը անհրաժեշտ է առհասարակ հասարակության արտադրողական ուժերի լրիվ զարգացման համար: Դա ոչ աշխատանքային ժամանակի ստեղծումն է⁶: Այստեղից հեղինակը եզրակացնում է. «Ինչպես երևում է, Կ. Մարքսը ազատ ժամանակը չի առանձնացնում արտաաշխատանքային ժամանակից, նրա համար այդ հասկացությունները նույնն են»⁷: Ընթացիկներ, թե հեղինակի այս պնդումը ճշմարտացի է: Բայց այս դեպքում հարց է ծագում. իսկ ի՞նչ նկատի ունեն Կ. Մարքսը, երբ գրում էր. «Օրվա մի որոշ մասի ընթացքում ուժը (բանվորը— Ռ. Վ.) պետք է հանգստանա, քնի, մյուս մասի ընթացքում մարդը պետք է բավարարի իր մյուս ֆիզիկական պահանջմունքները— սնվի, մաքրվի, հագնվի և այլն»⁸: Ինչպես տեսնում ենք, Կ. Մարքսը չի խոսում աշխատաժամանակից վեր ժամանակի մասին ընդհանրապես, այլ այն բաժանում է երկու մասի: Այն, որ Կ. Մարքսն առանձնացնում է ազատ ժամանակը ոչ միայն աշխատաժամանակից, այդ թվում նաև տուն-աշխատանքի վայր-տուն ճանապարհի վրա ծախսվող ժամանակից, վկայում է Կ. Մարքսի կողմից 1880 թ. բանվորների համար կազմված հարցաթերթիկը, որն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական հարցերը.

«Նշեցեք աշխատանքային օրվա սովորական տևողությունը և սովորական բանվորական օրերի թիվը շաբաթվա ընթացքում:

Ինչպիսի՞ ընդմիջումներ են լինում աշխատանքային օրվա ընթացքում:

Ինչքա՞ն ժամանակ եք վատնում յուրաքանչյուր օր, որպեսզի տնից հասնեք աշխատանքի վայր և աշխատանքից հետո՞ տուն»⁹:

Այս բոլորից հետո կարող է հարց ծագել՝ իսկ ո՞րն է արտաաշխատանքային ժամանակ և ազատ ժամանակ հասկացությունների նույնացման սխալը: Թվում է, որ նման մոտեցումը հնարավորություն չի տալիս ավելի ճիշտ որոշելու ազատ ժամանակի ավելացման հիմնական աղբյուրներն ու ուղիները: Այդ երկու հասկացությունների նույնացման դեպքում ստացվում է, որ ազատ ժամանակը կարելի է ավելացնել միայն աշխատանքային օրվա կրճատման հաշվին: Սակայն ենթադրել, որ աշխատանքային օրը անընդհատ կկրճատվի, սխալ է, որովհետև այն կարող է նվազել, հասնել նվազագույնի, բայց զրոյի երբեք չի հավասարվի: Ուստի կարծում ենք, որ ժամանակակից պայմաններում և հեռանկարում, արտաաշխատանքային ժամանակը հանդիսանում է ազատ ժամանակի ավելացման առավել արդյունավետ աղբյուր, քան՝ աշխատաժամանակը:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք որոշակիորեն նշել, որ արտաաշխատանքային ժամանակը և ազատ ժամանակը իրարից տարբերվում են ինչպես ծավալով, այնպես էլ բովանդակությամբ:

Ազատ ժամանակը բնութագրվում է երեք հիմնական պարամետրերով՝ մեծությամբ, կառուցվածքով և բովանդակությամբ:

Անդրադառնալով «ազատ ժամանակ» հասկացության կառուցվածքի վերլուծությանը՝ բոլոր հեղինակներն էլ առաջնորդվում են Կ. Մարքսի այն դրույ-

⁶ Տե՛ս Կ. Մարքս, Из неопубликованных рукописей, «Большевик», 1939, № 11—12, էջ 62:

⁷ Բ. Դ. Басов, *ibid.*, էջ 8:

⁸ Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 1, էջ 243:

⁹ Տե՛ս Կ. Մարքս և Փ. Զիգելս, Соч., т. 19, էջ 233—240

թով, որ այն (այսինքն՝ ազատ ժամանակը) ազատ է մնում բավականության, ժամանցի համար, որի հետևանքով լայն հնարավորություն է բացվում ազատ գործունեության և զարգացման համար: Ժամանակն ընդունակությունների զարգացման լայն տարածություն է¹⁰, Ելնելով այս և ուրիշ մտքերից, առանձնացվում են այն տիպական տարրերը, որոնք վերաբերում են ազատ ժամանակին: Մասնագիտական գրականության մեջ հիմնականում հետևյալ կերպ է ներկայացվում ազատ ժամանակ հասկացության կառուցվածքը.

1. Ուսուցումը.

2. Հասարակական գործունեությունը և ինքնակրթությունը.

3. Հոգևոր արժեքներից օգտվելը, որը կարող է տեղի ունենալ կոլեկտիվ և անհատական ձևով (գրքերի, ամսագրերի, լրագրերի ընթերցում, ռադիոյի և հեռուստատեսային հաղորդումների ունկնդրում և դիտում, կոլեկտիվ այցեր՝ կինո-թատրոններ, պատկերասրահներ, թանգարաններ և այլն):

4. Երեխաների դաստիարակությունը.

5. Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելը.

6. Հանդիպումներ բարեկամների, ընկերների, ժանոթների հետ (տանը և հասարակական այլ վայրերում):

7. Սիրողական զբաղմունքներ և այլն:

Հիմնականում համաձայնվելով նման դասակարգման հետ, նպատակահարմար ենք գտնում արտահայտելու մեր կարծիքը որոշ տարրերի վերաբերյալ՝ կապված դրանց բովանդակության և սոցիալական նշանակության հետ: Այսպես, համարյա բոլոր հետազոտողները ուսուցումը, առանց վերապահության, վերագրում են ազատ ժամանակին, համարում նրա տարրերից մեկը: Օրինակ, Վ. Ն. Պիմենովան գտնում է, որ ուսուցման համար հատկացվող ժամանակը պետք է վերագրել հասարակության ազատ ժամանակին, որքանով այն ազատ ժամանակի հետ միասին կատարում է նույն սոցիալական ֆունկցիան¹¹:

Մեզ հայտնի հետազոտողներից միայն Ն. Պ. Պիշուլինն է արտահայտել հետևյալ միտքը. «Զի կարելի անվերապահորեն ազատ ժամանակին վերագրել արտադրությունից չկտրված ուսուցմանը հատկացվող ժամանակը, ինչպես նաև հասարակական աշխատանքներին հատկացվող ժամանակը»¹²: Նկատենք, որ դա միայն հարցադրում է: Ավելին, հաջորդ էլում հեղինակը որոշակիորեն նշում է, որ ուսուցման, ինքնակրթության և հասարակական-քաղաքական գործունեության համար հատկացվող ժամանակը պետք է դասել ազատ ժամանակ հասկացության շարքը:

Կարծում ենք պարզ է, որ այստեղ խոսք է գնում միայն ուսուցման երկրային և հեռակա ձևերի մասին, որոնք անկասկած իրենց մեջ պարունակում են ազատ ժամանակի տարրերը: Այսպես, աշխատանքային օրը վերջացնելուց հետո յուրաքանչյուր մարդ իր տրամադրության տակ ունենում է որոշակի ժամանակ: Մեկը կարող է այդ ժամանակը հատկացնել ուսմանը, մյուսը՝ սպորտին, երրորդը՝ արվեստին և այլն, մի խոսքով՝ ով ինչպես ցանկանա: Տվյալ դեպքում ոչ ոքի չի պարտադրվում որևէ զբաղմունք: Այս առումով թե՛

¹⁰ Տե՛ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, Սոց., տ. 26, շ. III, էջ 264:

¹¹ Տե՛ս Վ. Ն. Պիմենկովա. Свободное время в социалистическом обществе, М., 1974, էջ 116:

¹² Н. П. Пищулин, Производственный коллектив, человек и свободное время, М., 1976, с. 7.

երեկոյան և թե՛ հեռակա ուսուցման ձևերը կարելի է դասել ազատ ժամանակի շարքը: Սակայն դրանով հարցի պարզաբանումը չի կարելի համարել սպառված: Օրինակ, եթե ուսուցումը (երեկոյան և հեռակա) համեմատելու լինենք մյուս տարրերի հետ, կտեսնենք, որ բոլորն էլ նույն նշանակութիւնը չունեն հասարակութեան համար, միևնույն փոխհարաբերութեան մեջ չեն գտնվում արտադրութեան պրոցեսի հետ, նույն ձևով չեն նպաստում անհատի բազմակողմանի զարգացմանը: Եվ իրոք, մի՞թե արտադրութեան համար ուսուցումը, սպորտով զբաղվելը, զանազան հավաքածուների կազմումը և այլն ունեն հավասար նշանակութիւն: Իհարկե՞ ոչ: Ուստի կարծում ենք, որ ուսուցման այդ ձևերը բխում են ոչ միայն յուրաքանչյուր աշխատողի անձնական շահերից, այլ նաև ժողովրդական տնտեսութեան, գիտատեխնիկական հեղափոխութեան օրավուր աճող պահանջներից:

Պորբլեմը հետազոտող հեղինակների կողմից տրված ազատ ժամանակի սահմանումից դարձյալ երևում է, որ ուսուցումը ամբողջութեամբ վերցրած չի կարելի միայն ազատ ժամանակի տարր համարել: Մասնագիտական գրականութեան մեջ իշխող է ազատ ժամանակի հետևյալ սահմանումը. «Ազատ ժամանակը ընդհանուր ժամանակի բյուջեի այն մասն է, որն անհատն ունի իր տրամադրութեան տակ... և կարող է օգտագործել այնպես, ինչպես ինքն է ցանկանում, կամ նա օգտագործում է անձնական հայեցողութեամբ»¹³:

Այս դեպքում բոլոր հետազոտողներն էլ ելակետ ունեն Կ. Մարքսի այն միտքը, համաձայն որի ազատ ժամանակ ասելով պետք է հասկանալ այն ժամանակը, որին կարելի է ազատ տնօրինել¹⁴: Նրանց այս ելակետը միանգամայն ճիշտ է: Բայց մի՞թե նույն ձևով կարելի է մոտենալ և՛ ուսմանը, և՛, ասենք, շախմատ կամ ֆուտբոլ խաղալուն: Այսօր մարդը կարող է ազատ ժամանակի ընթացքում խաղալ կամ չխաղալ, դիտել կամ չդիտել կինոնկար և այլն, մինչդեռ ուսուցման պրոցեսին նույն ձևով չի կարելի վերաբերվել: Բացի դրանից, որպեսզի ազատ ժամանակը օգտագործվի խելացի ու նպատակասլաց, հասարակական կազմակերպութիւնները որոշ իմաստով այն կարգավորում են, ելնելով ինչպես անհատի, այնպես էլ հասարակութեան շահերից: Սակայն ուսման պրոցեսի պլանավորումը, ծրագրավորումը և այլն էապես տարբերվում են ազատ ժամանակի մյուս տարրերի կարգավորումից:

Կարևոր ենք համարում ուշադրութիւն հրավիրել մեկ հանգամանքի վրա ևս: Մեր կողմից վկայակոչված հեղինակները (այդ թվում նաև այն հեղինակները, որոնց անունները հոդվածում չեն նշվում) երեխաների խնամքը դասում են «արտաաշխատաժամանակ» հասկացութեան կառուցվածքի շարքը, իսկ դաստիարակութիւնը՝ ազատ ժամանակի: Մեզ թվում է, որ եթե երեխաների դաստիարակութիւնը ամբողջութեամբ վերագրում ենք ազատ ժամանակին, ապա ստացվում է տարիմաստութիւն (պարադոքս), այսինքն, ինչքան շատ են երեխաները, այնքան մեծ է ազատ ժամանակի բացարձակ մեծութիւնը: Բացի այդ, հանրահայտ է, որ մանկապարտեզի դաստիարակչուհու կամ դպրոցի ու-

¹³ Г. С. Петросян. Нерабочее время трудящихся в СССР, М., 1965, с. 16; В. Г. Байкова, А. С. Зучал, А. А. Земцова. Свободное время и всестороннее развитие личности, М., 1965, с. 18; Г. П. Орлов. Культура свободного времени, Свердловск, 1969, с. 13; Г. И. Минц. Свободное время—желанное и действительное, М., 1978, с. 3.

¹⁴ Տե՛ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, Սոց., տ. 26, Վ. III, էջ 264:

սուցչուհու աշխատանքը հանդիսանում է հասարակական օգտակար աշխատանք: Իսկ մի՞թե ընտանիքում երեխաների դաստիարակությանը հատկացվող աշխատանքը նույնպես նրանց ծնողների կողմից կատարվող հասարակական օգտակար աշխատանք չէ: Կարծում ենք այդպիսին է: Եվ վերջապես՝ շանտեսենք մի հանգամանք ևս: Մի՞թե ճիշտ է, երբ երեխաների խնամքը անջատում են դաստիարակությունից: Մեր կարծիքով երեխաների խնամքը նույնպես դաստիարակության ձև է և չի կարելի խնամքն ու դաստիարակությունը իրարից անջատել:

Առանձին հեղինակներ տնային տնտեսության վարումը նույնպես վերագրում են ազատ ժամանակին: Օրինակ, Ա. Գլազաշովը գրում է, որ «տնային տնտեսության վարումը դա ազատ ժամանակի բաղկացուցիչ մասն է: Քանի որ զբաղմունքի զանազան ձևերը չեն հոգնեցնում բանվորին ո՛չ ֆիզիկական և ո՛չ էլ հոգևոր տեսակետից»¹⁵, Հեղինակի նման հարցադրման հետ չի կարելի համաձայնվել, մանավանդ որ հայտնի է տնային աշխատանքի՝ Վ. Ի. Լենինի կողմից շատ պարզ ու հստակ բնորոշումը. «... նրան (կնոջը— Ռ. Վ.) ճգնում, խեղդում, բթացնում, ստորացնում է մաճու տնային տնտեսությունը, նրան գամելով խոհանոցին և մանկասենյակին, նրա ջանքերը հափշտակելով վայրենության աստիճանի հասնող անարտադրողական, մանր, ջղայնացնող, բթացնող, ճնշող աշխատանքով»¹⁶: Մեկ այլ առիթով Վ. Ի. Լենինը գրել է. «Այդ տնային տնտեսությունը մեծ մասամբ ամենաանարտադրողական, ամենավայրենի և ամենածանր մի աշխատանք է, որ կատարում է կինը: Դա վերին աստիճանի մանր աշխատանք է, որն իր մեջ կնոջ զարգացմանը որևէ չափով նպաստող ոչինչ չի պարունակում»¹⁷: Այս կապակցությամբ տեղին է նաև հիշել, որ Կ. Մարքսը բազմիցս ազատ ժամանակը համարել է հասարակական հարստություն, ընդգծելով, թե ուրիշ ի՞նչ կարող է լինել հարստությունը (ազատ ժամանակը— Ռ. Վ.), եթե ոչ մարդու ստեղծագործական ձիրքերի ամբողջական բացահայտում¹⁸:

Տնային տնտեսության վարումը պահանջում է նաև կենցաղային իրերի, առարկաների, անհրաժեշտ մթերքների ձեռքբերում, որի համար հսկայական ժամանակ է վատնվում: Իսկ մի՞թե դա մարդկանց համար հանգիստ է, կամ նպաստում է անհատի բազմակողմանի զարգացմանը: Իհարկե՞ ոչ:

Այս առիթով Կ. Մարքսը նշել է, թե այն ժամանակը, որը բանվորին անհրաժեշտ է կենսական միջոցների ձեռքբերման համար, կորած ժամանակ է¹⁹:

Երբեմն առանձին հեղինակներ մոտ նկատվում է (շարադրանքում այդպիսի օրինակներ կան) «ազատ ժամանակ» հասկացության ըմբռնման սուբյեկտիվ միտումը, որի հետևանքով առանձին տարրեր, որոնք պետք է դասել «արտաաշխատաժամանակ» հասկացության կառուցվածքի շարքը, մեխանիկորեն վերագրում են ազատ ժամանակին: Օրինակ, փիլիսոփայական հանրագիտարանում հանդիպում ենք հետևյալ հարցադրմանը. «Տրանսպորտի վրա ծախսվող ժամանակը սովորաբար ազատ ժամանակին չի վերաբերում: Բայց եթե բանվորը հնարավորություն ունի ճանապարհին ընթերցելու գիրք կամ

¹⁵ «Политическое самообразование», 1960, № 5, с. 67.

¹⁶ Վ. Ի. Լենին, *ԵԼԺ*, հ. 39, էջ 28:

¹⁷ *Նույն տեղում*, էջ 251—252:

¹⁸ Տճ՝ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, *Սոց.*, տ. 46, Վ. 1, էջ 476:

¹⁹ Տճ՝ս Կ. Մարքս և Փ. Էնգելս, *Սոց.*, տ. 24, էջ 169:

լրագիր, ապա այդ ժամանակը կարելի է վերագրել ազատ ժամանակին»²⁰։ Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ ազատ ժամանակի մի մասը հանդիսանում է պասսիվ (օրինակ՝ քունը)²¹։ Թվում է, իրավացի են այն հեղինակները, որոնք քունը դասում են «արտաաշխատաժամանակ» հասկացության կառուցվածքի շարքը, քանի որ, Կ. Մարքսի բառերով ասած՝ կենսական ուժը վերականգնելու, նորոգելու և թարմացնելու համար անհրաժեշտ է առողջ քունը²²։

Քնելու, սնվելու և անձնական խնամքի համար հատկացվող ժամանակի հիմնական նպատակն ըստ էության մարդու ուժերի վերականգնումն է աշխատանքի և հասարակական կյանքի մյուս բնագավառներում ակտիվ գործունեություն ծավալելու համար։

Նպատակահարմար է անդրադառնալ նաև «ազատ ժամանակ» և «ժամանց» հասկացությունների հարաբերակցության բացահայտմանը։ Բանն այն է, որ երբեմն ժամանցը ամբողջությամբ նույնացվում է ազատ ժամանակի հետ, այն դիտվում որպես ազատ ժամանակի ամբողջ մեծություն²³։ Նման մոտեցման դեպքում ժամանցին են վերագրում ուսուցումը, ստեղծագործական և գիտական, հասարակական ու գեղարվեստական գործունեությունը, թերթերի ու ամսագրերի ընթերցումը, ռադիոյի և հեռուստատեսային հաղորդումների ունկնդրումն ու դիտումը, սիրողական զբաղմունքները, ֆիզկուլտուրան ու սպորտը և այլն։ Դժվար չէ նկատել, որ հավասարության նշան է դրվում տարբեր նշանակություն ունեցող գործունեության տեսակների միջև։ Մեր կարծիքով, սխալ է ազատ ժամանակը ամբողջությամբ ժամանցի հետ նույնացնելը, քանի որ դրանք չեն համընկնում ո՛չ իրենց կառուցվածքով և ո՛չ էլ բովանդակությամբ։ Դրանց միջև եղած տարբերությունները ուղղակի բխում են Կ. Մարքսի այն մտքից, ըստ որի ազատ ժամանակը իրենից ներկայացնում է ինչպես ժամանց, այնպես էլ առավել բարձրագույն գործունեություն կատարելու համար անհրաժեշտ ժամանակ²⁴։ Դա ժամանակ է բավականության համար, ժամանցի համար, ազատ գործունեության և զարգացման համար²⁵։ Ինչպես տեսնում ենք, Կ. Մարքսը առանձնացնում է երկու կարևոր տարրեր, որոնք բացահայտում են ազատ ժամանակի սոցիալական նշանակությունը։ Առաջին՝ ժամանց, երկրորդ՝ առավել բարձրագույն գործունեություն։ Ժամանցը կարծես թե գործունեության յուրահատուկ տեսակ է «իր համար», որի ընթացքում մարդիկ հանգստանալով, միաժամանակ իրացնում են հոգևոր արժեքներ։ Այլ կերպ ասած, հանդիսանալով ազատ ժամանակի մի մասը, ժամանցին վերաբերում է միայն հանգստին և զվարճություններին հատկացվող ժամանակը։ Մինչդեռ առավել բարձր գործունեությանն է վերաբերում ուսուցմանը, ընդհանուր և մասնագիտական գիտելիքների բարձրացմանը, ակտիվ հասարակական գործունեությանը և զանազան ստեղծագործական գործունեությանը հատկացվող ժամանակը։

Ավարտելով հարցի քննարկումը՝ գալիս ենք այն հզրակացության, որ ազատ ժամանակի սոցիալական ֆունկցիաների որոշման և նրա տարրերի դա-

²⁰ Философская энциклопедия, М., 1967, т. 4, с. 568.

²¹ Տե՛ս «Курс политической экономии», М., 1970, т. II, էջ 161։

²² Տե՛ս Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 279։

²³ Տե՛ս Բ. Грушин. Свободное время, М., 1967, էջ 13—14, «БСЭ», М., 1972, հ. 1, էջ 468։

²⁴ Տե՛ս Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., հ. 46, մ. III, էջ 221։

²⁵ Տե՛ս Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., հ. 26, մ. III, էջ 264։

սակարգման ժամանակ, համապատասխան այդ ֆունկցիաների, հիմնական շափանիշ պետք է համարել անհատի բազմակողմանի զարգացման շափանիշը: Մյուս կողմից, կարծում ենք իրավացի են այն հեղինակները (օրինակ՝ Ն. Պ. Պիշչուկինը), որոնք գտնում են, թե հասունացել է ժամանակը, որպեսզի զարգացած սոցիալիզմի պայմաններում օգտագործվի ոչ թե «ազատ ժամանակ» կատեգորիան ընդհանրապես, այլ մշակվի և գիտական շրջանառության մեջ դրվի «հասարակայնորեն անհրաժեշտ ազատ ժամանակ» կատեգորիան: Թրվում է, որ հասարակայնորեն անհրաժեշտ ազատ ժամանակը մարդու կարողությունների վերականգնման ու զարգացման պարտադիր նվազագույն ժամանակն է:

Р. А. ВАНЕСЯН—К вопросу структуры понимания «свободное время».— Статья посвящена исследованию структуры свободного времени, выявлению соотношения границ внерабочего и свободного времени при социализме. Автор анализирует и оценивает имеющиеся в научной литературе точки зрения по этой проблеме, пытается обосновать вывод, что определяющим критерием для выявления структуры свободного времени и тех элементов, которые составляют таковую, является всеобщее и гармоническое развитие личности.